ձեռնամուխ լեալ հակառակեսցի և փոփոխեալ այլայլեսցէ՝ 'ի կարգէ ամբարշտաց և 'ի թուոյ մեղաւորաց համարեսցի։ Որք միանգամ տեսանեն զկայսերական վճիռս զարդարեալ տիեզերահռչակ սեաւ թուղթայիւ, զմիտս և զնշանակութիւնս նորին ստոյգ՝ և զզօրութիւն նորին ճշմարիտ գիտասցեն, և պատուական նշանին հաւատասցեն։

Նմանապէս 'ի Կայսերական հրովարտակին բարեյիշատակ նախնոյն իմոյ Սէլիմայ Արքային՝ զոր տուեալ է ազգին Յունաց, յորում բացայայտ գրեալ են ուխտատեղիք եւ օթեւանք նոցին՝ այսպէս։ Օգնութեամբ բարձրելոյն Աստուծոյ եկեալ 'ի լեառն Երուսաղէմի 'ի տունն Աստուծոյ 'ի ՀՕ Սէպիէր ամսոյ յաղթանակաւ մտաք 'ի քաղաքն. Աթալիա Պատրիարքն Յունաց հանդերձ բոլոր միաբանութեամբ իւրով 'ի հպատակութիւն և 'ի հնազանդութիւն եկեալ աղաչաւոր եղեն ինձ՝ տիրել և ժառանգել Պատրիարքին զվաղէմի զեկեղեցիս զվանօրայս և զուխտատեղիս՝ թէ 'ի ներքս և թէ յարտաքս, որպէս տիրեալ են յառաջագոյն։ Եւ յաղագս տիրելոյ և ժառանգելոյ ըստ տրամադրութեան դաշնագրոյն մեծին Օմարայ և հրովարտակաց առաջին թագաւորաց, հրամայեցի ըստ զօրութեան հրովարտակիս տիրել և ժառանգել. որք են՝ Պատանատեղն Քրիստոսի յանդիման դրան տաճարին Ս. Յարութեան, մշտնջենաւոր 2 աշտանակք և կանթեղք, և 'ի նոյն տեղւոջ Պատրիարքութեան իւրոյ յատկացեալ վերին և ստորին կողմն 4 կամարաց Գողգոթայի (այժմ 2 կամարքն 'ի ձեռս Լատինաց)։ Վերին և ստորին կողմն եօթն կամարաց Ս. Կուսին (վերին յարկն այժմ ամբողջ սեփհական Լատինաց)։ Կեդրոն մեծի եկեղեցւոյն եւ Գերեզմանն և ընդ նմին ամենայն ուխտատեղիք նոցա։ Եւ 'ի դաւթի տաճարին Ս. Յարութեան երեք եկեղեցիքն, և յանդիման նորին Ս. Յովհաննէս եկեղեցին (ցարդ 'ի ձեռս Հայոց, և այս 'ի նշան նենգութեան Յունաց). Եւ Պատրիարքական եկեղեցին Հեղինեայ, Ս. Նիկողոս, Սրբուհի, Ս. Աֆթեմիոս, Ս. Կատարինէ, Ս. Միքայէլ, Ս. Գէորգ, Ս. Յովհաննէս և պարտէզ, Ս. Վասիլ, Ս. Նիկողոս, Ս. Տիմիդրի, Ս. Մարիամ, և այլ Ս. Յովհաննէս եկեղեցի, Ս. Յակոբ վանք Վրաց, Ս. Գէորգ եկեղեցի՝ և արտաքոյ Երուսաղէմի գերեզմանն